ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

2026 թվականի մարտի 02-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-1 գնման պայմանագրի

ք. Երևան «28» հունվար 2026թ.

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Գուրգեն Դավթյան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Մկրտչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2026 թվականի մարտի 02-ին կնքված N ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի և Պայմանագրի շրջանակում 2026 թվականի մարտի 19-ին կնքված N 2 Համաձայնագրում «Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները» բաժնում նշված «Գուրգեն Դավթյան» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարը այսուհետ կարդալ «163148037472», իսկ սպասարկող բանկը այսուհետ կարդալ ««Հայէկոնոմբանկ» ՓԲԸ»:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի ավտոբուս» ՓԲԸ	«Գուրգեն Դավթյան» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9	ՀՀ, Ք. Երևան, Գյուրջյան 14/11
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163078035496	Հ/Հ 163148037472
ՀՎՀՀ 00875439	ՀՎՀՀ 02565105
Տնօրեն՝ ---------- Բ. Կիրակոսյան (ստորագրություն)	Տնօրեն՝ ---------- Ա. Մկրտչյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.